



«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների
պաշտպանության հայկական կենտրոն»
հասարակական կազմակերպություն

Քաղաքացիական հասարակության հզորացումը
Հայաստանի Հանրապետության մարզերում

Տարեկան հաշվետվություն

2015 թ.

1. Տեղեկություններ կազմակերպության մասին

Կոնտակտային տեղեկություններ	
Անվանում և հապավում	«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ (Սախարովի կենտրոն)
Հասցե	Երևան 0009, Սարմենի 1
Հեռախոս	/+37410/ 542936, 561505, 587864, 561560
Ֆաքս	/+37410/ 561505
Էլ. փոստ	sakhfd@arminco.com
Համացանցային կայք	www.sakharovcenter.org
Ֆեյսբուքյան էջ	https://web.facebook.com/SakharovCentre/?fref=ts
Տնօրեն	Լևոն Ներսիսյան
Մասնաճյուղերը և դրանց ղեկավարները	ՇԻՐԱԿԻ Սեյրան Մարտիրոսյան ք. Գյումրի, Մ.Մկրտչյանի 38ա, բն. 1 հեռ. /+0312/ 36918, 33450 էլ.փոստ star@gyumri.am
	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ Լուսինե Թոփլաղալցյան ք. Գավառ, Գր.Լուսավորիչի 14/27 հեռ. /+0264/ 26860 էլ.փոստ sakhgavar@yandex.com
	ՄՅՈՒՆԻՔԻ Անդրանիկ Հարությունյան ք. Գորիս, Ավանգարդի փող. 4 հեռ. /+0284/ 25077 էլ.փոստ sakhgoris@rambler.ru

Հաշվետվու ժամանակահատվածը - 1 հունվարի 2015 թ.- 31 դեկտեմբերի 2015 թ.

Ծրագրի աշխարհագրությունը

Մարզ	Քաղաք	Համայնք
	Երևան	
Շիրակի մարզ	Գյումրի, Արթիկ Մարալիկ	Ախուրյան, Բասեն, Ագատան, Հառիճ, Ձորակապ, Աշոցք, Ամասիա, Արեգնադեմ
Գեղարքունիքի մարզ	Գավառ Ճամբարակ Վարդենիս, Սևան * Ընդգրկվել են նաև Վանաձոր (Լոռու մարզ) և Չարենցավան (Կոտայքի մարզ) քաղաքները	
Սյունիքի մարզ	Կապան Գորիս	Աղիտու, Շաքի, Քարահունջ, Որոտան, Սիսիան, Քաջարան, Լեհվազ, Ալվանք, Գեղի

Ներածություն

Սույն հաշվետվությունում ամփոփված են Սախարովի կենտրոն գործունեության արդյունքները՝ «Քաղաքացիական հասարակության հզորացում Հայաստանի Հանրապետության մարզերում» 2015 թ. ծրագրին համապատասխան:

Ծրագրի հիմնական նպատակն է՝

նպաստել երկրի հասարակական-քաղաքական, հասարակական-տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքում վերնախավին հակակշիռ ստեղծելուն՝ տեղում բնակչության և քաղաքացիական խմբավորումների քաղաքացիական ակտիվությունը հզորացնելու և ընդլայնելու միջոցով, որը հնարավորություն կտա.

- Բարձրացնել իշխանության կառույցների գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը կառավարման բոլոր մակարդակներում:

- Անձնական պատասխանատվության ենթարկել այն պաշտոնյաներին, որոնց անօրինական գործողությունները նպաստել են մարդու իրավունքների և ազատությունների ոտնահարմանը:
- Հասարակության ակտիվ մասին ոչ-ֆորմալ կերպով մասնակցելու հանրային շահերի պաշտպանությանը վերաբերող որոշումների կայացման գործընթացին:

Նշված խնդիրների լուծման նպատակով Սախարովի կենտրոնը հաշվետու ժամանակահատվածում իր գործունեությունը իրականացրել է հետևյալ ուղղություններով.

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում.

- Ընդլայնել է մարդու իրավունքների պաշտպանության գործունեությունը տեղերում՝ շահառուներին տրամադրելով անհատական և խմբային անվճար իրավաբանական և խորհրդատվական ծառայություններ:
- Քաղաքացիական նախաձեռնությունների անդամներին տրամադրել է իրավաբանական ծառայություններ երկրի իրավապահ մարմինների հետ ունեցած կոֆլիկտային իրավիճակներում:
- Տրամադրել է իրավաբանական և փաստաբանական ծառայություններ քաղաքացիական նախաձեռնությունների խմբային պահանջները երկրի դատական ատյաններում պաշտպանելու հարցում:
- Տեղական քաղաքացիական հասարակության կառույցներին տրամադրվել է իրավաբանական աջակցություն:

Կրթության ոլորտում.

- 15000 բնակչից ավել բնակչություն ունեցող գյուղական համայնքներում ընդլայնել է կրթական գործունեությունը <<Քաղաքացիական հասարակության դպրոցի>> շրջանակներում:
- Ընդլայնել է «Դասընթացավարների համար դասընթացը» (ToT) Գյումրու, Գավառի և Գորիսի ստացիոնար ուսուցման կենտրոններում՝ դրանք հետագայում գյուղական համայնքներում օգտագործելու նպատակով:
- Խորացված դասընթացի ընթացքում կազմակերպել է բնակչության քաղաքացիական ակտիվությունը հզորացնելուն ուղղված մեթոդների և տեխնոլոգիաների թեմատիկ քննարկումներ:
- Տեղի բնակչության բարոյական ոգին բարձրացնելու նպատակով կրթական գործունեության մեջ ներգրավել են տեղական կրոնական համայնքների ներկայացուցիչներ:
- Հաշվի առնելով իրականացված մոնիտորինգի արդյունքում Սախարովի կենտրոնի մարզային մասնաճյուղերի հաստատած համագործակցության փորձը կենտրոնական տարածքային կառավարման մարմինների հետ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների համար կազմակերպվել են հատուկ դասընթացներ:

Օրենսդրական ոլորտում.

- Լոբբինգ է իրականացրել երկրի բնակչության հասարակական-տնտեսական, բնապահպանական և հասարակական-քաղաքացիական շահերը՝ երկրի պետական կառավարման մարմինների օրինագծերի և որոշումների հանրային քննարկումներում ակտիվ մասնակցության միջոցով:
- Լոբբիստական գործունեությունում լայնորեն օգտագործել է ՔՀԿ-ների հասարակական կոալիցիաների ներուժը և ՁԼՄ-ների ու սոցիալական ցանցերի հնարավորությունները:
- Մարզերի բնակչության շրջանում բարձրացրել է քաղաքացիական-իրավական ոլորտի վերաբերյալ իրազեկության մակարդակը:

Տեղական կառավարման կառույցների և ՏԻՄ-երի գործունեության վերահսկման ոլորտում.

- Ընդլայնել և բարձրացվել է մարզերում կամավորների կրթության մակարդակը, որն էլ ուղղված կլինի ՏԻՄ-երի գործունեության կանոնավոր մոնիտորինգին:
- Ընդլայնվել է Սախարովի կենտրոնի մարզային մասնաճյուղերի համագործակցությունը տեղական ՀԿ-ների հետ՝ տեղում համատեղ մոնիտորինգ իրականացնելու նպատակով:

Սույն ծրագրի շրջանակներում Սախարովի կենտրոնի գործունեության ընդհանրացված ցուցանիշները

- Ցուցաբերվել է անվճար իրավաբանական օգնություն և փաստաբանական ծառայություն **3814** շահառուների:
- Մատուցվել է անվճար իրավաբանական ծառայություն **112** իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի
- Կազմակերպվել է **68** հավաքական իրավաբանական խորհրդատվություն Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի գյուղական համայնքների և քաղաքների բնակիչների համար:
- Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերի քաղաքների և գյուղական համայնքների բնակիչների շրջանում տարածման համար պատրաստվել է **132** անուն հուշաթերթ և **12** Մամուլի տեսություն, որոնք լուսաբանում են ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի առանձին ոլորտներ:
- Հասարակական շահերի և քաղաքացիների իրավունքների արտադատական պաշտպանության նպատակով ուղարկվել է **399** դիմում, բողոք և առաջարկություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին:
- Կազմակերպվել են **835** դասաժամ սեմինար-պարապմունքներ, դասախոսություններ, թրեյնինգներ և այլ կրթական միջոցառումներ **526** ունկնդիրների համար:

- **66** հասարակական կազմակերպություններ և այլ կառույցներ տեղերում մշտապես ներգրավված են եղել համատեղ գործունեության մեջ, այդ թվում՝
- Շիրակի մարզում՝ **30** կազմակերպություն
- Գեղարքունիքի մարզում՝ **20** կազմակերպություն
- Սյունիքի մարզում՝ **16** կազմակերպություն
- Իրականացվել է **1** միասնական հասարակական մոնիտորինգ. «ՀՀ Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի համայնքների համացանցային պաշտոնական կայքերի բովանդակային մոնիտորինգ»: (Մոնիտորինգի զեկույցը ուղարկվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին, նշված մարզերի մարզպետներին, մոնիտորինգի ենթարկված համայնքների համյանքապետներին, տարբեր միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների, և գործընկեր ու շահառու այլ ԲՀԿ-ների: Միաժամանակ պատրաստակամություն է հայտնվել մասնակցել մարխորհուրդների նիստերին՝ մոնիտորինգի արդյունքները ավելի հանգամանալից ներկայացնելու համար):
- Կամավորական գործունեության մեջ մշտապես ներգրավված են եղել գյուղական համայնքների և փոքր քաղաքների **69** բնակիչ, այդ թվում՝
- Շիրակի մարզում՝ **45** մարդ
- Գեղարքունիքի մարզում՝ **10** մարդ
- Սյունիքի մարզում՝ **14** մարդ
- Զանգվածային տարբեր լրատվամիջոցներում իրականացվել է **23** լրատվական լուսաբանում:
- Կենտրոնի աշխատակիցները մասնակցել են **139** հանդիպումների, սեմինարների, կլոր-սեղանների և քննարկումների:
- Ազգային օրենսդրության տարբեր ասպեկտներով ՀՀ Ազգային ժողով և համապատասխան պետական մարմիններ են ներկայացվել **9** առաջարկություններ ու լրացումներ՝ այդ օրենքների և ՀՀ կառավարության որոշումների նախագծերը ՀՀ Սահմանադրությանը և ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացված միջազգային նորմերին համապատասխանեցնելու նպատակով: *(Տե՛ս Ամփոփ հաշվետվությունն իրավաբանական անվճար խորհրդատվություն և ծառայություն մատուցելու վերաբերյալ բաժնում):*

**Հասարակական, քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակը Հայաստանի
Հանրապետությունում ծրագրի իրականացման ժամանակահատվածում**

Հայաստանի Հանրապետությունում անկախ պետականության զարգացման 25 տարիների ընթացքում խոր հակասություններ են առաջացրել հասարակության մեջ. նրա փոքր հատվածը (մոտ 10%) տնօրինում է ազգային հարստության 9/10-րդ մասը, իսկ ճնշող մեծամասնությանը (մոտ 90%) հասանելի է այդ բարիքների միայն 1/10-րդը:

Ծանոթագրություն. Երկրի բնակչության 35-40 տոկոսն իր կենսամակարդակով պատկանում է աղքատների, իսկ նրանց 25% -ը՝ ծայրահեղ աղքատների՝ չքավորների դասին:

Հասարակության պառակտումը թշնամական հակասություններ է առաջացրել իշխանավորների և հասարակության ճնշող մեծամասնության միջև, որն, առաջին հերթին, արտահայտվում է հավատի ու վստահության բացակայությամբ կառավարության և քաղաքական ցանկացած կառույցի նկատմամբ:

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կենսագործման հարցերին նվիրված իր ելույթում ՀՀ նախագահը նշեց. «Մենք պարտավոր ենք հասնել սոցիալական համերաշխության երկրի ներսում: Սոցիալական խնդիրները սերտորեն կապված են արդարության հետ, և մենք պարտավոր ենք էապես բարձրացնել հասարակական հարաբերություններում արդարության հաստատման գործընթացի տեմպը»:

Նախագահ Ս. Սարգսյանի ելույթը ծրագրային էր: Նա շեշտը դրեց ապագայի գլխավոր խնդիրներից մեկի՝ «հասարակության մեջ սոցիալական համերաշխության» հասնելու վրա: Մակայն հարց է ծագում. «Ինչո՞ւ այդ հարցը չէին «տեսնում» նախորդ նախագահները, այդ թվում հենց նախագահ Ս. Սարգսյանը»:

Նրանք տեսնում էին և գիտեին հասարակության մեջ այդ պառակտման մասին, սակայն ցանկացած իշխանության պարադիգման՝ պայքարն է հանուն իշխանության, ավելի կոնկրետ/ճիշտ՝ քաղաքական հավակնությունների գերակայությունը սոցիալական խնդիրների լուծման նկատմամբ: Նման պարադիգմայի դեպքում ընտրվում և ամրապնդվում է այն հասարակական-քաղաքական վերնախավը, որը նպաստում է անձնական իշխանության ամրապնդմանը, իսկ մնացած բոլոր հիմնախնդիրները՝ միայն «բարձրագույն կարգի ածանցյալներ» են, որոնք խլացվում են այնպիսի լոզունգներով, ինչպիսիք են՝ «մենք շրջափակման մեջ ենք», «պայքար խորհրդային անցյալի ժառանգության դեմ», «ամեն ինչ մեր անկախության պաշտպանության համար է», «մեր զրկանքները՝ մեր արտաքին թշմանիների խարդավանքներն են» և այլն:

Լ. Տեր-Պետրոսյանի իշխանավարության ժամանակ երկիրը լքել է 1.5 մլն մարդ (պաշտոնական տվյալներով՝ 585 հազ. մարդ), Ռ.Քոչարյանի ժամանակ՝ մոտ 130 հազ

մարդ, իսկ Ս. Սարգսյանի ժամանակ մեր արտագաղթած հայրենակիցների թիվը կազմում է շուրջ 260 հազար: Հ. Բագրատյանին, երկրի վարչապետ եղած ժամանակ մեղադրում էին, որ իր տնտեսական քաղաքականությամբ նա նպաստեց երկրից «ուղեղների արտահոսքին»: Հ. Բագրատյանը առարկում էր՝ հիմնավորելով, որ միայն մեկ ակադեմիկոս է լքել երկիրը:

Վարչապետը չէր գիտակցում, որ երկիրը լքում է հասարակայնորեն պահանջված մարդկային ներուժը, որը սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական, կազմակերպական կառավարման տեխնոլոգիաների հսկայական ոլորտի հիմնական բաղադրիչն է: Երկրի այդ ներուժը, որը կրողն էր բազմաթիվ սերունդների կողմից կուտակված որոշակի գիտելիքների, հոգևորի և աշխատանքային փորձի, փաստորեն, կորած է Հանրապետության համար:

Հանրապետությունն իր անկախության ժամանակաշրջանում կորցրեց և շարունակում է կորցնել ոչ թե իր բնակչության հասարակ մասը, արտահայտված վիճակագրության թվաբանության մեջ. այն կորցնում է իր ապագան: Դա այն մարդկային ներուժն էր, որն իր պրոֆեսիոնալ, բարոյական հատկանիշներով որոշակի առումով ձևավորել էր ազգային վերնախավը: Դա հասարակության այն հատվածն էր, որ դաստիարակել և պաշտպանել էր ամբողջ հասարակությունը:

Ներկայումս ստեղծել ենք հասարակության վերնախավ, որը չունի հոգևոր արժեքներ, նրանց տվել ենք օրենքից բարձր լինելու իրավունք, դրա դիմաց ստանալով կասկածելի անձնական հավատարմություն՝ հիմնված կորպորատիվ, ընտանեկան, կլանային համերաշխիք (խմբական երաշխավորություն), հովանավորչության, ամենաթողության և կոռուպցիայի վրա:

Ծանոթագրություն. «Մենք պարտավոր ենք ստեղծել այնպիսի հասարակական միջավայր, որտեղ չեն լինի արտոնյալներ, այլ կլինի միասնական ժողովուրդ՝ կարգապահ, օրենքները հարգող, խաղաղություն սիրող, հպարտ»: ՀՀ նախագահ Ս. Սարգսյան (մեջբերում վերոնշյալ ելույթից):

Հնարավոր է արդյոք այս դրույթի իրականացումը, առնվազն հաջորդ տասնամյակի ընթացքում, ներկայումս հասարակության մեջ առկա բարոյական մակարդակի, ինչպես նաև հասարակական-քաղաքական վերնախավի ճնշող մեծամասնության պրոֆեսիոնալ հատկանիշների պայմաններում:

Այս հարցը ենթադրում է բացասական պատասխան, քանի որ երկիրը ուշացել է որակապես նոր մարդկային ռեսուրսների պատրաստման գործում, իսկ փոխարինել բոլոր մակարդակներում հին դեկավար կադրերին իրենց կորպորատիվ, ընտանեկան, կլանային

կապերով և ստրկական հավատարիմ ծառայությամբ, հնարավոր չէ, առանց հասարակական, սոցիալական պայթյուն առաջացնելու:

Նախագահի ելույթում ևս մեկ կարևոր դրույթ է հետևյալ հայտարարությունը. «...Հայաստանի քաղաքական համակարգը կդառնա առավել բաց, ճկուն և ներքուստ բարդ ...»: Սակայն, հիմքը, որի վրա պետք է կառուցել երկրի ապագա քաղաքական համակարգը՝ այն քաղաքական դաշտն է, որը ներկայումս ներկայացնում է «իշխող կուսակցությունը» և խորհրդարանական ընդդիմությունը:

«Իշխող կուսակցությունը» գործնականում գերիշխում է երկրի քաղաքական, հասարակական և տնտեսական կյանքում: Այն առավել հզոր, կազմակերպված և կորպորատիվ միավորված քաղաքական ուժն է: Նրա համար «սարսափելի» չեն խորհրդարանական ընդդիմության ելույթները, որի գործունեությունը խորհրդարանում կառուցողական բնույթ չի կրում: Ընդդիմությունը անդեմ, անսկզբունքային է, և իր ղեկավարների անձնական հավակնությունների շնորհիվ, ընդունակ չէ միավորվել ցանկացած, քիչ թե շատ կարևոր հարցի շուրջ:

Պետք է ընդունել «իշխող կուսակցության» արժանիքը՝ արտաքին հակառակորդներին չեզոքացնելու գործում:

Նույնն է իրավիճակը պարբերական քաղաքացիական նախաձեռնությունների հանդեպ, որոնք ինքնաբերաբար կազմակերպվում են այս կամ այն սոցիալ-կենցաղային ճգնաժամի հարցով:

«Իշխող կուսակցությունը» մշակել է զանգվածային փողոցային ելույթները մարող մի շարք տեխնոլոգիաներ: Նա վարպետորեն մանիպուլյացիայի է ենթարկում ընդդիմադիր դաշտի «խաղացողներին»: «Իշխող կուսակցությունը» գրեթե սերտաճել է երկրի կառավարման համակարգի հետ, և դա նրան հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում գործել վարչական ռեսուրսների ողջ հզորությամբ: Այս պայմաններում, իշխանության ճյուղերի անկախության հարցը խնդրահարույց է դառնում:

ՀՀ նախագահի վերոնշյալ ելույթում առանձնահատուկ տեղ են գրավում դրույթները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն նվիրված են մարդու իրավունքների պաշտպանությանը:

Հատկանշական է, որ ՀՀ Սահմանադրության փոփոխություններում մարդու իրավունքների պաշտպանությանը հատկացված է մի առանձին/ամբողջ բաժին: Եվ եթե ենթադրենք, որ ՀՀ արդարադատության նախարար տիկին Ա. Հովհաննիսյանը առնվազն ծանոթ է այս բաժնի բովանդակությանը, ապա անբացատրելի է նախարարության համառությունը՝ հասարակության կազմակերպություններին իրավունք չշնորհելու՝

դատական կարգով պաշտպանելու իրենց անդամների, շահառուների և հանրային շահերը:

Նույնիսկ ՀՀ Սահմանադրական դատարանի առաջարկությունը՝ թույլատրել պրոֆիլային ՀԿ-ներին դատական կարգով պաշտպանելու բնապահպանական բնույթի հիմնախնդիրները, չհամոզեցին տիկին Հովհաննիսյանին՝ իրավապաշտպան կազմակերպությունների ճնշող մեծամասնության պահանջի արդարության մեջ: Հարկ է նշել, որ ցանկացած մակարդակի կառավարման/ինքնակառավարման ղեկավարների ճնշող մեծամասնությունը հանձին հասարակության քաղաքացիական ակտիվ հատվածի չի տեսնում իր դաշնակցին կառավարման մակարդակի բարձրացման հարցում: Նման մոտեցման հետևանքով պաշտոնյան միանձնյա է որոշում, թե ինչը համարել մարդու իրավունքների խախտում, ընդ որում հենց օրենքի գերակայության սկզբունքի խախտումը մղվում է հետին պլան:

Բյուրոկրատական դասի ճնշող մեծամասնությունն իր գործունեության մեջ կողմնակից է «պասիվ գործունեության» սկզբունքին, երբ կառավարման որոշումները ձգձգվում են, դրվում են այլ առնթեր կամ վերադաս մարմինների վրա կամ ընդհանրապես չեն ընդունվում: Այս վարչական հնարքի հետևանքով հանգում ենք մարդու իրավունքների և ազատությունների խախտման: Իշխանությունից հասարակության օտարման նախնական փուլ է հանդիսանում իշխանության մարմինների արհեստական անմատչելիությունը և փակվածությունը (չինովնիկի մոտ ընդունելությունը ըստ նախնական գրանցման կամ նամակի, ոստիկանության կամ արտագերատեսչական անվտանգության ներկայացուցիչների կողմից արգելք/շրջափակումը, ընդունելության օրերի հաճախակի խախտումը և այլն), որը իշխանության հանդեպ ժողովրդի հիասթափության պատճառներից մեկն է:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իշխանության և քաղաքացու միջև առկա «անդունդի» հաղթահարմանը նպաստող առաջին քայլերից մեկը կլինի հետևյալ առաջարկությունների քննարկումը.

1. Առաջարկել Հանրապետության առաջին դեմքերին (նախագահ, վարչապետ և Ազգային ժողովի նախագահ) պարբերաբար հանդիպումներ կազմակերպել Հանրապետության ուսանողության/ուսանողների հետ (Այս հանդիպումները չպետք է ձևական բնույթ կրեն, նպատակը պետք է լինի երիտասարդներին ծանոթացնել Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին քաղաքականությանը: Հանդիպումների ընթացքում լսարանը պետք է կարողանա ազատ հարցեր տալ):
2. Պարտավորեցնել սոցիալական ծառայությունների ոլորտի նախարարություններին և գերատեսչություններին ՀՀ կառավարության նստաշրջաններում իրենց եռամսյա հաշվետվություններում լուսաբանել հարցեր, որոնք առնչվում են առաջատար ճյուղերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա գործերի իրավիճակին:

3. Պարտավորեցնել նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարներին խիստ հաշվառում անցկացնել և գրանցել մարդու իրավունքների խախտումները՝ իրենց ենթակայության տակ գտնվող հիմնարկներում և կազմակերպություններում՝ բնակչությունից ստացված բողոքների, առաջակությունների, լրատվամիջոցների և սոցցանցերի ելույթների հիման վրա:
4. Կարգ սահմանել, ըստ որի, ՀՀ սոցիալ-կենցաղային և բնապահպանական ուղղվածություն ունեցող օրինագծերը և կառավարության որոշումները պետք է քննարկվեն ՀՀ կառավարության նստաշրջանում, լայն հանրային քննարկումներից հետո, հաշվի առնելով ներկայացված առաջարկությունները և քաղաքացիական հասարակության տեսակետները (Չնայած «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգի» առկայությանը՝ այդ գործընթացը ֆորմալ, ոչ պարտադիր բնույթ է կրում: Պարտավորեցնել ՀՀ կառավարությանը՝ տեղեկացրել ՀՀ ԱԾ-ին օրենքի նախագծի վերաբերյալ հասարակական կարծիքի մասին):
5. Օրենսդրորեն իրավունք տալ քաղաքացիական հասարակության կառույցներին պաշտպանել հանրային շահերը Հանրապետության դատական համակարգի բոլոր մակարդակներում:
6. Փոփոխել Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրական ակտերը, որոնք սահմանափակում են հասարակական կազմակերպությունների՝ Փաստաբանների պալատի անդամ չհանդիսացող իրավաբանների իրավունքները փաստաբանական ծառայություններ մատուցելու քաղաքացիներին:
7. Հանձնարարել նախարարությունների, գերատեսչությունների, պետական կառավարման տեղական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին, պարտադիր կարգով, սահմանված ժամկետներում և ըստ էության պատասխանել քաղաքացիների գրավոր բողոքներին և դիմումներին:
8. Հանձնարարել ՀՀ դատախազին մշտապես իրականացնել լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում ելույթների վերլուծություն մարդու իրավունքների և հանրային շահերի խախտումների վերաբերյալ և իրազեկել Հանրապետության բնակչությանը ձեռնարկված քայլերի մասին:
9. Կարգ սահմանել, ըստ որի, մարդու իրավունքների ոտնահարում թույլ տված պաշտոնյան պետք է անձամբ նյութական պատասխանատվություն կրի խախտման համար (այդ թվում՝ Եվրադատարանի որոշումներով սահմանված վճարումները):
10. Կազմակերպել պարբերական բանավեճեր նախարարությունների և գերատեսչությունների բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ, հասարակական գործիչների հետ՝ Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա հարցերի առնչությամբ:

11. Կարգ սահմանել, ըստ որի, ՀՀ նախագահին և վարչապետին ուղղված մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի բողոքների և առաջարկությունների պատասխանները տալիս են նախագահի կամ վարչապետի աշխատակազմերը (Եթե քաղաքացին դիմում է պետության առաջին դեմքերին, ապա նախագահի և վարչապետի աշխատակազմերը պետք է հանդես գան որպես արբիտր իշխանության համապատասխան կառույցների և քաղաքացիների միջև):
12. Հանձնարարել նախարարությունների, գերատեսչությունների, մարզպետարանների և խոշոր քաղաքային իշխանությունների ղեկավարներին ստեղծել հանրային խորհուրդներ՝ սոցիալական, կենցաղային, բնապահպանական և այլ հանրային շահերի ու մարդու իրավունքների վրա ազդող խնդիրների հանրային քննարկումներ անցկացնելու նպատակով:
13. Նախարարություններին, գերատեսչություններին և մարզպետարաններին՝ մշակել և տարածաշրջանային ու տեղական ինքնակառավարման մարմինների պրակտիկայում ներդնել միջոցառումներ ուղղված բիզնես էթիկայի, պրոֆեսիոնալիզմի և պետական դիսցիպլինայի մակարդակի բարելավմանը՝ քաղաքացիների իրավունքների խախտումները կանխելու և նրանց իրազեկությունը տվյալ մարմինների գործունեության վերաբերյալ բարձրացնելու նպատակով:

Վերոնշյալ միջոցառումները միայն ուղղությունների ցանկ են, որոնցից յուրաքանչյուրը պետք է հստակ կարգավորվի իրավաբանական կարգային ասպեկտում: Միջոցառումների արդյունքները պետք է մանրակրկիտ վերլուծել և վերահսկել: Պետք է ստեղծվի հասարակական մթնոլորտ, որը կբացառի որևէ ձևականություն/ձևամոլություն դրանց կենսագործման ընթացքում:

Ամփոփ հաշվետվություն

իրավաբանական անվճար խորհրդատվություն և ծառայություն մատուցելու վերաբերյալ (2015թ. հունիս – դեկտեմբեր ընկած ժամանակահատված)

Հաշվետու ժամանակահատվածում «Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ Երևանյան գրասենյակի (այսուհետ՝ Սախարովի կենտրոն) իրավաբանական ծառայությանն են դիմել 868 քաղաքացի՝ իրավաբանական անվճար խորհրդատվություն ստանալու ակնկալիքով:

Սախարովի կենտրոն դիմած քաղաքացիների իրավունքների պաշտպանության և նրանց խախտված իրավունքների վերականգնման նպատակով Սախարովի կենտրոնի կողմից կազմվել է 88 գրություններ՝ հասցեագրված ՀՀ պետական տարբեր կառույցներին և տեղական ինքնակառավարման մարմիններին: Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում Սախարովի կենտրոնը ստացել է իր բոլոր գրությունների պատասխանները: Բացի այդ, Սախարովի կենտրոնի իրավաբանական ծառայությունը օգնել է 15 քաղաքացիների՝ հայցադիմումներ, բողոքներ, հարցումներ, միջնորդություններ և դիմումներ կազմելու հարցում, որոնք այդ քաղաքացիների կողմից ներկայացվել են ՀՀ դատական տարբեր ատյաններին, ինչպես նաև ՀՀ արդարադատության խորհուրդ:

Բացի իրավապաշտպան գործունեությունից, Սախարովի կենտրոնի իրավաբանական ծառայությունը կատարել է 9 իրավական ակտերի, դրանց նախագծերի վերաբերյալ ուսումնասիրություններ և համապատասխան առաջարկություններ ներկայացրել ՀՀ պետական լիազոր մարմիններին, դրանք են՝

- 1) «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկատվության գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև տեղեկատվության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ
- 2) «Հասարակական կազմակերպության մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- 3) «ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքում» լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ
- 4) «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ գործող օրենք
- 5) «Զինապարտության մասին» ՀՀ գործող օրենք
- 6) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի սակագնի անհիմն բարձրացման վերաբերյալ 17.06.2015թ. որոշում
- 7) «Քաղաքացի Աղվան Արզումանյանին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

8) ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 08.04.2015թ. «Համայնքային պաշտոնական համացանցային կայքերի վարման օրինակելի կարգը հաստատելու մասին» հ. 280-Ա գործող հրաման

9) «Հայաստանի Համընդհանուր Պարբերական Դիտարկման (UPR review)» վերաբերյալ այլ երկրների կողմից Հայաստանի Հանրապետությանը ներկայացված առաջարկությունների մասով նախապատրաստվող զեկույցի նախագիծ

Սախարովի կենտրոնի իրավաբանական ծառայությունը իր շահառուներին իրավաբանական խորհրդատվություն տրամադրելուց բացի, իրավաբանական անվճար ծառայություն է ցուցաբերել «Թոչնասերների» ՀԿ-ը և 'Համահայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնությանը:

Սախարովի կենտրոնը կարևորում է իրավաբանական խորհրդատվության միջոցով քաղաքացիներին իրազեկելու առաքելությունը, այն թույլ է տալիս բարձրացնել նրանց իրավագիտակցության մակարդակը և ավելի արագ լուծել նրանց կողմից բարձրացված հարցերը:

Ցավոք, վերլուծելով քաղաքացիների կողմից բարձրացված հարցերը, կարող ենք նշել, որ Սախարովի կենտրոնն դիմած քաղաքացիների մեծ մասը տեղյակ չեն իրենց իրավունքների ու պարտականությունների, ինչպես նաև պետական և տեղական մարմինների լիազորությունների մասին, քաղաքացիների իրավագիտակցության մակարդակը ցածր է:

Իրավաբանական խորհրդատվության ընթացքում պարզում ենք, որ քաղաքացու կողմից բարձրացված մեկ հարցն ունի ածանցյալ այլ հարցեր, որոնք փոխկապակցված են միմյանց հետ, կամ հարցը լուծելու համար քաղաքացին չունի բավարար ապացույցներ կամ փաստաթղթեր, որոնք թույլ կտան իրեն օրենքով չարգելված միջոցներով ու սեղմ ժամկետում վերականգնել իր խախտված իրավունքները: Այդ իսկ պատճառով, շատ հաճախ օգնում ենք քաղաքացիներին ձեռք բերել այդ ապացույցները կամ փաստաթղթերը, այդ նպատակով հարցումներ ուղարկելով ՀՀ պետական և տեղական մարմիններին և ստացված տեղեկատվությունը տրամադրում քաղաքացիներին, միևնույն ժամանակ բացատրելով նրանց իրենց հետագա անելիքները, որոնք օրենքով սահմանված կարգով ու ժամկետում նրանք պետք է ձեռնարկեն:

Մույն հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիները հիմնականում դիմել են սոցիալական, ընտանեկան, հողային և քաղաքացիական իրավահարաբերություններից բխող վեճերի լուծման հարցերով, մասնավորապես կենսաթոշակի նշանակման, դրա վերահաշվարկման և դադարեցման, պետական նպաստառուների ցանկում ընդգրկվելու և նպաստ ստանալու, ամուսնալուծության, ալիմենտի բռնագանձման, հողամասի նկատմամբ վարձակալության պայմանագիր կնքելու, տարբեր բնույթի պայմանագրեր կնքելու և դրանք անվավեր ճանաչելու, բնակարանն անհատույց սեփականաշնորհելու, անձին բնակարանի հաշվառումից հանելու և նոր հասցեում հաշվառման վերցնելու, կտակ կազմելու, ժառանգություն ընդունելու և հրաժարվելու կարգի հարցերով:

Չնայած, Հայաստանի Հանրապետությունում կան նաև այնպիսի հարցեր և արատավոր երևույթներ, որոնք ավելի խորքային են և համակարգային լուծում են պահանջում: Օրինակ, մեր փորձը ցույց է տալիս, որ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների զանգվածային խախտումներին նպաստող հիմնական պատճառները հետևյալն են.

- Համատարած կոռուպցիան և պետական միջոցների անարդյունավետ ծախսերը (Հայաստանի պետական պարտքը պաշտոնապես հասեց 5 միլիարդ ԱՄՆ դոլարի սահմանագիծը: 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 5 միլիարդ 71 միլիոն ԱՄՆ դոլար: Այդ գումարից 4.3 միլիարդը արտաքին պարտքն է, իսկ 461 միլիոնը՝ ներքին: Հայաստանում վարկերն ավելի արագ են աճում, քան երկրի համախառն ներքին արդյունքը),
- որոշ պաշտոնատար անձանց մասնագիտական ցածր պատրաստվածությունն ու անիրազեկությունը, նրանց պատասխանատվության զգացումի բացակայությունը, անգործությունը (գործում է ծանոթ-բարեկամ սկզբունքը, ինչպես նաև արտագաղթի արդյունքում մասնագետների /կադրային ռեսուրսի/ բացակայությունը),
- հանրապետությունում առկա անպատժելիության մթնոլորտը, անբարեխիղճ պաշտոնյայի և ոստիկանի նկատմամբ փաստացի անվերահսկելիությունն ու թողտվությունը (հայեցողական մոտեցում է, երբ անհրաժեշտ են համարում, ապա պատասխանատվության են ենթարկում ամենացածր պաշտոն զբաղեցնող անձին),
- որոշ օրենքների և նորատիվ ակտերի անհամապատասխանությունն ու հակասությունը ՀՀ սահմանադրությանն ու միջազգային իրավունքի սկզբունքներին, իրավական ակտի դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալումը, իրավական ակտն ավելի բարձր կամ նույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին կամ նույն իրավական ակտի տարբեր դրույթներին հակասող կամ միմյանց չհամապատասխանող իրավական ակտեր ընդունելն ու կիրառելը (մասնագետների /կադրային ռեսուրսի/ և քաղաքական կամքի բացակայությունը),
- սոցիալական բնույթի այն իրավական ակտերը, որոնք բնակչությանը տանում են դեպի աղքատացում, այդ իրավական ակտերը չեն բխում բնակչության լայն շերտերի շահերից (գազի, էլեկտրաէներգիայի, ջրի սակագները, հարկերը, տուրքերը և այլ վճարները վերջին երեք տարվա ընթացքում բարձրացել են մի քանի անգամ, Հայաստանում 2015թ. նվազագույն ամսական աշխատավարձը կազմում է 55.000 ՀՀ դրամ, միջին կենսաթոշակը 36.000 ՀՀ դրամ: ԱՄՆ դոլարով հաշվարկելու դեպքում միջին կենսաթոշակի չափը կազմում է 100 ԱՄՆ դոլար, իսկ նվազագույն աշխատավարձը՝ 133 ԱՄՆ դոլար: Երեխայի ծննդյան նպաստը նախկին մակարդակում է. 1-ին և 2-րդ երեխայի համար՝ 50.000 ՀՀ դրամ (122 ԱՄՆ դոլար), 3-րդ և 4-րդ երեխայի համար՝ 1 մլն ՀՀ դրամ, 5-րդ երեխայի համար՝ 1.5 մլն ՀՀ դրամ (շուրջ 3650 ԱՄՆ դոլար (աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ֆինանսների նախարարություն)),

- որոշ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ պատշաճ հսկողության բացակայությունը և/կամ “հովանավորչությունը” (Երևանի օտարման գոտիների ձեռք բերող ընկերությունների և անհատ ձեռներեցների /կառուցապատողների/ շահերի գերկայությունը, որն ավելի բարձր է դասվում, քան սեփականատերերի և գույքային իրավունքներ ունեցող քաղաքացիների իրավունքներն ու շահերը, օլիգարխ պաշտոնյաների կողմից հովանավորվող ընկերությունների մենաշնորհային դիրքը, որը թույլ չի տալիս փոքր և միջին բիզնեսը զարգանա հանրապետությունում),
- ոստիկանության կողմից խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ անհամաչափ ուժի, բռնությունների, քաղաքացիների խաղաղ հավաքի իրավունքի ոչ իրավաչափ միջամտության դրսևորումները և քաղաքացիներին անօրինական կարգով բերման ենթարկելու “սովորույթը” և անպատիժ մնալը,
- և այլ խնդրահարույց հարցեր, որոնք խոչընդոտում են Հայաստանում մարդու իրավունքների լիարժեք իրացմանն ու պաշտպանությանը:

Հ. Գ. Սույն հաշվետվությանը կից ներկայացվում է լրացուցիչ տեղեկատվություն այն հարցերի վերաբերյալ, որոնց լուծման ուղղությամբ Սախարովի կենտրոնի կողմից քայլեր են ձեռնարկվել և լուծում ստացել:

ԶԼՄ-ում քաղաքացիական հասարակության հիմնախնդիրների,

մարդու իրավունքների և հասարակական շահերի պաշտպանության լուսարանում

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 17.06.2015թ. էլեկտրաէներգիայի սակագնի անհիմն բարձրացնելու վերաբերյալ որոշման կապակցությամբ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 17.06.2015թ. էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացնելու վերաբերյալ որոշումը մեծ դժգոհություն է առաջացրել ՀՀ հասարակության լայն շերտերի մոտ: Ձևավորվեց “Ոչ թալանին” քաղաքացիական նախաձեռնությունը, որին անդամակցեցին հարյուրավոր քաղաքացիներ և դուրս եկան փողոց՝ պահանջելու չեղարկել այդ վիճելի որոշումը: Սակայն ՀՀ պետական լիազոր մարմինների կողմից արձագանք չստանալով, նրանք որոշեցին բողոքի ակցիաներ անցկացնել և փակել Երևանի կենտրոնական փողոցներից մեկը՝ Բաղրամյան պողոտան, որտեղ գտնվում են ՀՀ պետական գլխավոր կառույցների նստավայրերը (ՀՀ նախագահ, ՀՀ Ազգային ժողով, ՀՀ Սահմանադրական դատարան): Սակայն 2015թ. հունիսի 23-ին մահակներով և վահաններով զինված հարյուրավոր ոստիկաններ բռնի ուժի գործադրմամբ և ջրցանի օգնությամբ ցրեցին Երևանի Բաղրամյան պողոտայում հավաքված ցուցարարներին, բռնությամբ բերման ենթարկեցին մեծ թվով քաղաքացիների և խաղաղ հավաքի մասնակիցների: Այդ ընթացքում բռնության ենթարկվեցին նաև տասնյակ լրագրողներ, սակայն այս մասով առ այսօր որևէ պաշտոնյա պատասխանատվության չի ենթարկվել: ՀՀ քննչական կոմիտեն ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից խաղաղ հավաքի և նստացույցի մասնակիցների նկատմամբ բռնություն կիրառելու վերաբերյալ հարուցված քրեական գործը 26.10.2015թ. կարճել է՝ ՀՀ իրավապահ մարմինների կողմից հանցակազմի բացակայության հիմքով: Էլեկտրաէներգիայի սակագնի անհիմն բարձրացնելու, Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների, բռնի ուժի կիրառման վերաբերյալ Սախարովի կենտրոնի իրավաբան Մ. Խաչատրյանը մի քանի հարցազրույցներ է տվել **“Առավոտ” օրաթերթին**, **“Ա1+” լրատվական կենտրոնին** և **“Հայոց Աշխարհ օրաթերթ”**-ին: “Առավոտ” օրաթերթի 25.06.2015թ. համարում հրապարակվել է այդ հարցազրույցը՝ “Ոչ ՇՕԿ-ն և ոչ էլ Սերժ Սարգսյանը չեն կարող հոսանքի թանկացման ակտը կասեցնել, դա կարող են անել պատգամավորները” վերնագրով:

“Կուտակային կենսաթոշակների մասին” ՀՀ օրենքի որոշ դրույթների սահմանադրականությունը վիճարկելու վերաբերյալ

Մ. Խաչատրյանը մասնակցել է նաև մամուլի ասուլիսի, որը տեղի է ունեցել 09.07.2015թ **“Մեդիա Կենտրոն” հարթակում**, որը վերաբերում էր ՀՀ սահմանադրական դատարանի 07.07.2015թ. “Կուտակային կենսաթոշակների մասին” ՀՀ օրենքի և դրանից բխող այլ օրենքների սահմանադրականության վերաբերյալ կայացված որոշմանը:

Ասուլիսին մասնակցել են նաև ՀՀ ԱԺ պատգամավոր Ա. Մինասյանը, իրավապաշտպան Ա. Զեյնալյանը և “Դեմ եմ” քաղաքացիական նախաձեռնության երկու անդամներ: Նա ներկայացրել է “Կուտակային կենսաթոշակների մասին” ՀՀ օրենքի որոշ դրույթների սահմանադրականությունը վիճարկելու վերաբերյալ **ՀՀ ազգային ժողովի թվով 36 պատգամավորների** դիմումը ՀՀ սահմանադրական դատարանում: ՀՀ սահմանադրական դատարանը մասնակի բավարարել է ՀՀ ԱԺ պատգամավորների դիմումները, ըստ էության հիմնախնդիրը թողնելով չլուծված ու չհատակեցված վիճակում:

“Սահմանադրական բարեփոխումների մասին” ՀՀ օրենքի նախագծի և Սահմանադրության նոր նախագծի վերաբերյալ

Մ. Խաչատրյանն այլ իրավաբանների, իրավապաշտպանների ու քաղաքագետների հետ միասին բազմիցս մասնակցել է **“Սահմանադրական բարեփոխումների մասին” ՀՀ օրենքի նախագծի և Սահմանադրության նոր նախագծի վերաբերյալ** քննարկումներին և հայտնել Սախարովի կենտրոնի կարծիքը: Ըստ որի, Սախարովի կենտրոնը գտնում է, որ ՀՀ սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտության կարիք չկա, դեմ ենք ոչ միայն մշակված նախագծի բովանդակությանը, այլ նաև դրա գաղափարին, որը առաջ է մղում միայն ՀՀԿ կուսակցությունը՝ ի դեմս կուսակցության առաջնորդի և ՀՀ գործող նախագահի: Ըստ մեր կանխատեսումների՝ ՀՀ գործող Սահմանադրության փոփոխությամբ որևէ դրական փոփոխություն տեղի չի ունենալու ՀՀ կառավարման համակարգում, քանի դեռ քաղաքական դաշտում և իշխանության համակարգում իշխող կուսակցությունը՝ ՀՀԿ-ն, շարունակում է մնալ որպես տոտալիտար ուժ: Սակայն 2015թ. դեկտեմբերի 6-ին հերթական անգամ ականատես եղանք ընտրախախտումների ու ընտրակեղծիքների:

Աջակցություն օրինաստեղծ գործունեությանը

Մեր դիտարկումը կոնկրետ “ՀԿ-ների մասին” ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ:

Սույն օրենքի նախագիծը վեց տարի լրամշակումների է ենթարկվել, հինգ օրինագիծ է մշակվել ՀՀ արդարադատության նախարարության կողմից: ՀՀ արդարադատության նախկին երեք նախարարները մասնակցել են այդ նախագծի կազմման աշխատանքներին և վերջնական տարբերակը համաձայնեցվել էր ՀԿ-ների ներկայացուցիչների հետ: Այս աշխատանքներին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև Սախարովի կենտրոնը:

2015թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել նշյալ նախագիծը և ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով: Սակայն ՀՀ արադարադատության նորանշանակ նախարար Ա. Հովհաննիսյանը՝ իր նախաձեռնությամբ, առանց որևէ հիմնավորման և պատճառաբանության, օրենքի նախագծից հանել է ՀԿ-ների կողմից դատարան դիմելու իրավունքի վերաբերյալ դրույթը: Նախարարն իր այդ դիրքորոշումը հիմնավորում է ՀՀ սահմանադրական բարեփոխումների հետ, մինչդեռ այդ իրավունքի դրույթը բացարձակ չի հակասում ոչ նախորդ, ոչ ներկայիս ՀՀ սահմանադրության պահանջներին:

Ի դեպ, ՀՀ կառավարությանը ներկայացված ամփոփաթերթում դեռ մնացել է այն դրույթը, որ ՀԿ-ները իրենց, իրենց կամավորների, շահառուների և հանրային նշանակության հարցերով կարող են դիմել դատարան: Նույնիսկ այդ իրավունքի իրացման նպատակով ՀՀ արդարադատության նախկին նախարարը պատրաստել էր «ՀՀ Վարչական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ, որի վերաբերյալ Սախարովի կենտրոնն իր առաջարկություններ էր ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարությանը: Փաստորեն, նախարարի կողմից հաշվի չի առնվել ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. հ. ՄԴՈ-906 որոշմամբ արտահայտված ՀՀ սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական դիրքորոշումը, այն է, օրենքով պետք է ապահովվի ՀԿ-ների արդարադատության մատչելիության իրավունքը:

Մեր դիտարկումները Հայաստանի ՀՊԴ (UPR review) հանձնարարականների կատարման գնահատման չափորոշիչները՝ ըստ ոլորտների, նախագծի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ՄԱԿ Մարդու իրավունքների Խորհրդին ներկայացված Համընդհանուր պարբերական դիտարկումը (ՀՊԴ), որպես կանոն, հիմնականում արտացոլում է այն օրենսդրական ակտերը, որոնք ընդունվել են պատկան մարմինների կողմից կամ պետք է ընդունվեն մոտ ապագայում, ինչը, ըստ ՀՀ կառավարության, դիտարկվում է որպես իրավիճակի բարելավման ապահովում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում:

Սակայն տեղեկատվության մյուս երկու աղբյուրները՝ այլ պետությունների հանձնարարականներն ու ՀՀ քաղաքացիական հասարակության կառույցների, մասնավորապես հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) այլընտրանքային զեկույցները տարբերվում են դրանից, քանզի դրանցում արտացոլվում են այդ ընդունված իրավական ակտերի կատարման կամ իրականացման/կիրառման փաստացի մակարդակը:

Ակնհայտ է, որ ՀՀ կառավարության կողմից ներկայացված ՀՊԴ-ի վերջնական զեկույցը հակադրվում է քաղաքացիական հասարակության կառույցների կողմից ներկայացված այլընտրանքային զեկույցին: Այդ ՀԿ-ներն իրենց իրավապաշտպան գործունեության ընթացքում մարդկանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները պաշտպանելիս բխվում են տարբեր խոչընդոտների:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության հաջորդ ՀՊԴ-ի զեկույցը քննարկվելու է չորս տարի անց, ապա կարելի է եզրակացնել, որ այս ժամանակահատվածում (4 տարի) ազգային ՀՊԴ-ն մշակողների և քաղաքացիական հասարակության կառույցների միջև կիրառման հակամարտությունը, այսինքն ՀՀ իշխանությունների և քաղաքացիական հասարակության միջև չեն հաստատվի «գործընկերային» հարաբերություններ, քանզի ՀՀ իշխանությունները դեռևս չեն ցուցաբերում քաղաքական կամք և ցանկություն՝ պայքարելու անօրինականությունների դեմ, ինչպես նաև երբեք օբյեկտիվ քննություն չեն անցկացնում և պատասխանատվության չեն ենթարկում իրական մեղավորներին: ՀՀ իշխանությունների կողմից ձեռնարկված

ցանկացած փորձ ավարտվում է անհաջողությամբ և որևէ գործընթաց իր մեջ չի պարունակում արժանահավատություն: Օրինակները բազմաթիվ են, դրանք հրապարակված են մեր՝ հասարակական կազմակերպություններիս տարբեր հայտարարություններում և հաշվետվություններում:

Սակայն խիստ անհրաժեշտ եմ համարում նշել, որ այս “հակամարտությունը” ՀՀ իշխանությունների ու քաղաքացիական հասարակության կառույցների միջև էլ ավելի խորացավ ս. թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ իշխանությունների կողմից կազմակերպված ՀՀ Սահմանադրության փոփոխության վերաբերյալ հանրաքվեի ընթացքում և դրանից հետո, երբ քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչները՝ տեղական դիտորդների կարգավիճակում, կրկին սկանառես եղան ընտրակեղծիքների, ծեծկոտուքների, կրկնաքվեարկությունների, լրագրողների աշխատանքի խոչընդոտման, կաշառքների բաժանման, ուրիշների փոխարեն քվեարկելու, լցոնումների դեպքերին: Այս մասին արձանագրել և բարձրաձայնել են տեղական և որոշ միջազգային դիտորդները, լրագրողները, ընդդիմադիր կուսակցություններից հանձնաժողովներում ընդգրկված անձինք: Արդյունքում կեղծվել են 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքները՝ ուռճացվել են ոչ միայն ընտրողների քանակը, այլ նաև “Այո” քվեարկողների թիվը: Ողջ վարչական ռեսուրսներն օգտագործվել են իշխող կուսակցության առաջնորդի, ներկայումս ՀՀ նախագահի նախաձեռնությամբ մշակված ՀՀ Սահմանադրության փոփոխության վերաբերյալ նախագիծն ընդունելու գործընթացում:

Սա մեկ քայլ հետ մղեց Հայաստանի Հանրապետությանն ու իր ժողովրդին, փաստորեն ՀՀ իշխանությունները ոչ թե ի վիճակի չեն, այլ ցանկություն չունեն արդար, անկախ, օբյեկտիվ և թափանցիկ ընտրություններ անցկացնելու, իսկ «գործընկերային» հարաբերություններ քաղաքացիական հասարակության հետ ստեղծելու: ՀՀ իշխանությունների ցանկությունները դրանք միայն խոսքեր են՝ միջազգային կազմակերպությունների ու կառույցների աչքերը շոյելու և դրամաշնորհներ և վարկեր ձեռք բերելու նպատակով: Իսկ ՀՀ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ձգտում են իրական գործընկերային հարաբերությունների, այլ ոչ թե իմիտացիոն բնույթի հարաբերությունների: Գաղտնիք չէ նաև, որ Հայաստանում մշտապես խախտվում են քաղաքացիական հասարակության կառույցների իրավունքները, մասնավորապես հարկ եմ համարում առանձնացնել մի քանիսը՝

1. որոշումների կայացման գործընթացներին ՀԿ-ների մասնակցության իրավունքը՝ պետական և տեղական մակարդակներում,
2. օրինական հիմքերով իրենց փնտրվող տեղեկատվությունը ստանալու իրավունքը, որը չի պարունակում պետական, առևտրային և ռազմական գաղտնիքներ,
3. արդարադատության մատչելիության իրավունքը (ՀԿ-ներն իրավունք չունեն դատական կարգով վիճարկելու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված հանրային բնույթի որոշումները:

Գործնականում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց ամենօրյա գործունեության մեջ չեն կիրառում քաղաքացիական հասարակության կառույցների՝ հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական նախաձեռնությունների հետ հանրային նշանակության հրատապ հարցերի ու խնդիրների հանրային քննարկման մեխանիզմները: Յուրաքանչյուր պետական կառույց (ՀՀ ԱԺ, ՀՀ նախագահ, ՀՀ վարչապետ, նախարարություններ, Երևանի քաղաքապետ) իրենց առընթեր ստեղծել են հասարակական խորհուրդներ կամ դաշինքներ, սակայն այդ կառույցները որևէ լուրջ և էական դերակատարում չունեն որոշումների կայացման գործընթացում: Սախարովի կենտրոնն արդեն երեք տարի է որևէ խորհրդի ու դաշինքի անդամ չէ, քանզի ունի կուտակած մեծ փորձ, երբ որոշումներ կայացնելիս հասարակական կազմակերպությունների կարծիքը որևէ պետական կառույցի պաշտոնյա չի ընդունում, այլ փոխարենն ընդունում է այն որոշումը, որը հավանության է արժանացել իշխող կուսակցության և ՀՀ Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող խմբակցության կողմից:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի Աշխատանքային խմբի վերջնական փաստաթղթում նշված են ավելի քան հարյուր դիտողություններ և առաջարկություններ, որոնք Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է իրականացնել սահմանված ժամկետում, սակայն, դժբախտաբար, ՀՀ իշխանությունները շարունակում են թույլ տալ նույն սխալները և որևէ առաջընթաց չունեն մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում:

ՀՀ նախագահի 01.08.2003թ. ՆՀ-103-Ա հրամանագրի վերաբերյալ

Սույն հաշվետվությամբ հարկ ենք համարում անդրադառնալ նաև մի շատ կարևոր հիմնախնդրի, որը վերաբերում է ՀՀ նախկին նախագահ Ռ. Քոչարյանի 01.08.2003թ. ՆՀ-103-Ա հրամանագրով **ցմահ ազատազրկման դատապարտված թվով 42¹ անձանց քրեական գործերի վերաբացմանն ու նախագահի նշյալ հրամանագրի օրինականությանն ու հիմնավորվածությունը** վիճարկելու հարցին: Արդեն 10 տարուց ավել է ՀՀ նախագահը, ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ գլխավոր դատախազությունը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, ՀՀ դատական ատյանները չեն անդրադառնում այս հարցին:

Մեր կարծիքով, սույն հանձնարարականում միայն նշել, որ մահապատիժը որպես պատժամիջոց Հայաստանում փաստացի չի կիրառվել սկսած 1990թ., իսկ 2003թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն մահապատիժը որպես պատժամիջոց չի սահմանված, բավարար չէ: Հայաստանի Հանրապետությունը լուրջ անելիք ունի ՀՀ նախագահի վերը նշված հրամանագրով թվով 42 ցմահ ազատազրկման դատապարտված անձանց իրավունքների պաշտպանության և այդ հրամանագրով նրանց խախտված իրավունքները վերականգնելու ուղղությամբ:

¹ Այսօր, պաշտոնական տվյալներով, նրանցից միայն 35-ն են մնացել, մյուսները մահացել են քրեակատարողական հիմնարկում:

Մահապատիժը, որպես պատժի տեսակ Հայաստանի Հանրապետությունում փաստացի չի կիրառվել սկսած 1990 թվականից՝ ՀՀ անկախությունից հետո՝ 23.08.1990թ.: Մահապատիժը փաստացի չի կիրառվել նաև 1992թ. մարտի 2-ին Հայաստանի Հանրապետության ՄԱԿ-ի անդամ դառնալու և հայտարարված մորատորիումի, ինչպես նաև Հայաստանի 2001թ. հունվարի 25-ին Եվրոխորհրդի անդամ պետություն դառնալու և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիան և դրան կից 6-րդ արձանագրությամբ ստորագրելու և 2002թ. ապրիլի 26-ին վավերացնելու հիմքերով: Իսկ մահապատիժը, որպես պատժատեսակ վերացվել է 01.08.2003թ. ՀՀ քրեական օրենսգրքով և ՀՀ Սահմանադրությամբ 27.11.2005թ. փոփոխություններով (Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի):

ՀՀ քրեական օրենսգիրքն ընդունվել է 18.04.2003թ. և ուժի մեջ է մտել 01.08.2003թ. (ՀՕ-528-Ն), իսկ ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին ՀՀ օրենքն ընդունվել է 18.04.2003թ. և ուժի մեջ է մտել 12.05.2003թ. (ՀՕ-529-Ն): Սույն օրենսգրքով մահապատիժը, որպես պատժատեսակ այլևս նախատեսված չէ:

ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանվել է, որ «Մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը 1961 թվականի մարտի 7-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածով մահապատժի դատապարտված անձանց նկատմամբ նշանակված պատիժը դատավճիռը կայացրած դատարանի կամ դատապարտյալի կողմից պատիժը կրելու վայրի դատարանի կողմից փոխարինվում է ցմահ ազատազրկմամբ»: Սակայն ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից 2003թ. օգոստոսի 1-ի հ. ՆՀ-103-Ա հրամանագրով իր նախաձեռնությամբ ներում է շնորհվել թվով 42 (այսօր արդեն 35) մահապատժի դատապարտված անձանց, իսկ այնուհետև՝ Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը, առանց անհատական վերանայումների, 42 նախկին մահապատժի դատապարտված անձանց պատիժները փոխարինեց ցմահ ազատազրկմամբ:

Ներման ինստիտուտի գաղափարը հենց նրանում է, որ այն դիտվում է որպես մարդասիրական քայլ հանրապետության նախագահի կողմից, որի արդյունքում դատապարտվածի վիճակը բարելավվում է, ավաղ, ՀՀ նախկին նախագահի հ. ՆՀ-103-Ա ներման հրամանագրի հետևանքով թվով 42 (ներկայումս արդեն 35) դատապարտյալի վիճակը բացարձակապես չի բարելավվել, այլ ընդհակառակը՝ ավելի վատթարացել է, պատիժը մեղմացվելու փոխարեն այն խստացվել է: Ինչպես փաստաբաններն ու իրավապաշտպաններն ենք պնդում՝ ներում շնորհելիս պետք է ներման խնդիրագիր լինի դատապարտյալի կամ նրա պաշտպանի կողմից, այսինքն՝ ներում հայցող կողմ լինի, ինչը սույն դեպքում չի եղել: Բացի այդ՝ ներում շնորհելով ՀՀ նախագահն իր հրամանագրով լուծել է պատժի տեսակի որոշման և նշանակման հարցը (պատժելիության հարցը), ինչը պետք է աներ դատարանը (ՀՀ Սահմանադրություն, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք):

Մահապատժի փոխարինումը ցմահ ազատազրկմամբ մեղմացում է, որովհետև մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը գործող ՀԽՍՀ Քրեական օրենսգրքով նախատեսված չէր «ցմահ ազատազրկում» պատժատեսակը: Այսինքն՝ ներում շնորհելու դեպքում մահապատժը կարող էր փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով՝ մինչև 15 տարի կամ 20 տարի ազատազրկման կամ լրիվ ազատում պատժի տեսակից: ՀՀ քրեական նոր օրենսգրքի 83 հոդվածի համաձայն հանցագործության համար դատապարտված անձը ներման ակտով կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:

Վերը նշվածը թույլ է տալիս արձանագրելու, որ ՀՀ նախկին նախագահի հ. ՆՀ-103-Ա հրամանագիրը, որը դեռևս ուժի մեջ է, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության և Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերով երաշխավորված մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների սկզբունքերին, մասնավորապես ՀՀ նախագահն իրավունք չունի առանց ցմահ ազատազրկման դատապարտված անձանց դիմումների առկայության, իր սեփական նախաձեռնությամբ ներում շնորհելու, ինչպես նաև պատիժ նշանակելու, այդ իրավունքը բացառապես տրված է միայն դատարաններին: ՀՀ սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնում են միայն դատարանները:

2003 թվականի օգոստոսից՝ ցմահ ազատազրկման դատապարտված արդեն թվով 35 անձինք տարիներ շարունակ պայքարում են իրենց քրեական գործերի վերանայման համար, իրենց բաց նամակներով հայտարարում են, որ ՀՀ նախկին նախագահի հ. 103-Ա ներման հրամանագրով խախտվել է իրենց իրավունքները, իրենց պատիժը ոչ թե մեղմացվել, այլ խստացվել է, բացի այդ պահանջում են իրենց գործերի անհատական վերանայում:

ՆՀ-103-Ա հրամանագրով ցմահ ազատազրկման դատապարտված անձանցից մեկը՝ Մհեր Ենոքյանն արդեն մի քանի տարի է պայքարում է իր իրավունքների ու արդարության հասնելու համար, նա մի քանի անգամ է դիմել դատարան, սակայն հաջողության չի հասել՝ ՀՀ նախագահի այս չարաբաստիկ հրամանագրի պատճառով: Այս անգամ նա արդեն դիմել է ՀՀ վարչական դատարան և վիճարկում է վերը նշված հրամանագրի օրինականությունն ու հիմնավորվածությունը, ավաղ դատարանները խուսափում են ըստ էության քննարկման առարկա դարձնել դատապարտյալի դիմումը...: Այս գործով ՀՀ վարչական դատարանը 19.10.2015թ. որոշմամբ մերժել է ցմահ ազատազրկման դատապարտված Մ. Ենոքյանի հայցադիմումը ընդունումը: Մ. Ենոքյանն այն բողոքարկել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, սակայն վերջինս էլ չի ցանկանում վարույթ ընդունել:

Ցմահ դատապարտյալների խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներս, փաստաբանները, լրագրողները և փորձագետները բազմիցս արտահայտել ենք այն տեսակետը, որ Սահմանադրության և Օրենքի խախտում է տեղի ունեցել, սակայն, ինչպես ցույց է տալիս իրականությունը,

Հայաստանի Հանրապետությունը չի ընդունում և չի ցանկանում ուղղել այն սխալը, որը թույլ է տվել ՀՀ նախկին նախագահը:

Ի դեպ, դեռևս 2004 թվականին մահապատիժը ցմահ ազատազրկմամբ փոխարինված դատապարտյալների խնդրին անդրադարձել է նաև Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովը՝ կոչ անելով ՀՀ իշխանություններին խնդիրը լուծել յուրաքանչյուր առանձին դեպքի քննարկմամբ և պատժի փոփոխության կամ գործի վերանայման դիմում ներկայացրած անձանց գործերի վերաքննմամբ: Այսօր ցմահ ազատազրկման դատապարտված 35 անձինք, ովքեր պայքարում են իրենց պատժաչափերի վերանայման համար, ավաղ, ներպետական դատական ատյաններից մեծ ակնկալիքներ չունեն, ՀՀ դատարանները կաշկանդված են և գործնականում ՀՀ նախագահի ինստիտուտի դեմ որոշումներ չեն կայացնում:

Մախարովի կենտրոնի այն շահառուների գործերը, որոնք եղել են խնդրահարույց և պետական մոտեցում ու իրավական լուծում են պահանջել

Ազգությամբ հայ երկքաղաքացի Արա Մարտոյանին Իսրայելի Հանրապետություն հանձնելու գործի վերաբերյալ

Իսրայելի Հանրապետության բանակի ռազմաօդային ուժերի ծառայող, Իսրայելի Հանրապետության և միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացի համարվող Արա Մարտոյանի գործը ցույց տվեց, որ ՀՀ օրենսդրությունում առկա է օրենսդրական բաց, որը պահանջում է պետական մոտեցում և իրավական լուծում:

Ա. Մարտոյանը (ծնվ. 11.03.1995թ. և ՀՀ քաղաքացու անձնագիր ստացել է 01.11.2000թ.) ս. թ. օգոստոսի 25-ին մեկ շաբաթով ժամանել էր Հայաստան՝ հարազատներին այցելության, բայց ՀՀ պետական լիազոր մարմինները թույլ չէին տվել նրան վերադառնալ Իսրայել, պատճառաբանելով նա ծնվել է Հայաստանում, համարվում է ՀՀ քաղաքացի, ուստի պետք է ծառայեր Հայաստանի բանակում: Երկար քաշքշուկից հետո Ա. Մարտոյանը վերադարձավ Իսրայել, սակայն ՀՀ պետական լիազոր մարմինները, այդ թվում նաև ՀՀ պաշտպանության նախարարությունը, այդպես էլ իրավաբանորեն չհիմնավորեցին թե ո՞ր օրենքով և ի՞նչ հիմքով էր Ա. Մարտոյանի ՀՀ սահմանադրության 25-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունքը սահմանափակվել և այնուհետև թույլ տրվել նրան վերադառնալ Իսրայելի Հանրապետություն, եթե նա ուներ պարտադիր զինվորական ծառայություն անցնելու չկատարված պարտավորություն: Չէ՞ որ ՀՀ զինվորական կոմիսարի գրության համաձայն՝ “Զինապարտության մասին” ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենքի) 3.1-րդ հոդվածի ուժով Ա. Մարտոյանը ենթակա էր գորակոչի և պարտադիր զինվորական ծառայության ՀՀ զինված ուժերում, քանի որ ուներ պարտադիր զինվորական ծառայություն անցնելու չկատարված պարտավորություն: Հարց է առաջանում ի՞նչը ստիպեց ՀՀ իշխանություններին անտեսել ՀՀ զինվորական կոմիսարի այս գրությունը (ինչը մեր

կարծիքով ամբողջովին բխում է Օրենքի պահանջից): Կամ ի՞նչ հիմքով Ա. Մարտոյանն ուղղակի ազատվեց պարտադիր զինվորական ծառայություն անցնելու չկատարված պարտավորությունից, այդպես էլ մնաց անհայտ: Սա հոետորական հարց չէ, այլ իրավական լուրջ վերլուծություն ու հիմնավորում է պահանջում: Սախարովի կենտրոնի ուսումնասիրությունն այս հարցի վերաբերյալ ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետությունը չունի այն իրավական հիմքը/նորմը, որը թույլ կտա ՀՀ պատկան մարմիններին քաղաքացի Ա. Մարտոյանի և նրա նման նույն կարգավիճակում գտվող հարյուրավոր մեր հայրենակիցներին ազատել պարտադիր զինվորական ծառայություն անցնելու չկատարված պարտավորությունից՝ երկքաղաքացիություն ունենալու փաստի առկայության դեպքում:

Հարցի էությունը կայանում է նրանում, որ Ա. Մարտոյանը (այդ մասին են վկայում նաև ՀՀ ԱԳՆ և ՀՀ ԱՎՎ գրությունները) հանդիսանում է երկքաղաքացի, իսկ Օրենքի 3.1-րդ հոդվածի 2-րդ մասով նա չէր կարող ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից, հետևաբար, նրա նկատմամբ ենթադրվում է, որ պետք է կիրառվել “Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայության չանցած քաղաքացիների մասին” ՀՀ օրենքի պահանջները:

Մեր կարծիքով, քաղաքացի Ա. Մարտոյանի և նրա նման նույն կարգավիճակում գտնվող ՀՀ քաղաքացիների նկատմամբ չի կարող կիրառվել սույն Օրենքի 3.1-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, քանի որ այն վերաբերում է այն քաղաքացիներին, ովքեր նոր են ձեռք բերում ՀՀ քաղաքացիություն և այն ձեռք բերելուց առաջ (մինչև ՀՀ քաղաքացիություն ընդունելը) ծառայել են այլ պետության զինված ուժերում, այսինքն ավարտել են իրենց ծառայությունն այլ պետությունում: Չնայած, սույն դեպքում էլ՝ Օրենքի 3.1.-րդ հոդվածի 1-ին մասում չի նշվում իսկ եթե տվյալ քաղաքացին գտնվում է այլ պետությունում զինվորական ծառայության մեջ, ապա այդ դեպքում ինչպես է հարցին լուծում տրվում:

Օրենքի 3.1-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հետևյալը՝ *“Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունած այլ պետության քաղաքացին ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից, եթե մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային զինվորական ծառայություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետությունների”*²:

Այսպիսով, մեր իրավակիրառ պրակտիկայում ունեցանք մի դեպք, որի լուծման ընթացքում ՀՀ պատկան մարմինները հայտնվեցին անորոշության մեջ, իսկ գործող օրենսդրությունը չէկավ “օգնության”: Հավանաբար, ՀՀ պատկան մարմինները ևս նկատել էին, որ ՀՀ գործող օրենսդրությունում առկա է մեծ բաց, որը թույլ չի տալիս իրենց արագ և իրավաբանորեն հիմնավորված որոշում կայացնել, ուստի փոխարենը “օգնության” եկան

² ՀՀ կառավարությունը չի սահմանել այդ պետությունների ցանկը:

որոշ պատգամավորների հետ բանակցություններն ու հայ-իսրայելական մամուլի ճնշումները:

Իրավական նորմի բացակայության արդյունքում ՀՀ պետական լիազոր մարմինները չկարողացան և չեն կարող կիրառել «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 3.1-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները կոկրետ Ա. Մարտոյանի և նրա նույն կարգավիճակում գտնվող քաղաքացիների նկատմամբ: Օրենքի նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում հստակ սահմանված են, որ *այլ պետության քաղաքացիություն ընդունած Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից, անկախ այն հանգամանքից՝ ծառայել է նա այլ պետությունում, թե ոչ: Երկքաղաքացին չի ազատվում գորահավաքից և վարժական հավաքից:* «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Փաստորեն, ՀՀ օրենսդիրը «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում հստակ սահմանել և իրավական կարգավորում է տվել այն դեպքին, երբ անձը նոր է ձեռք բերում ՀՀ քաղաքացիություն, և մինչև այն ձեռք բերելը այլ պետությունում անցել է պարտադիր զինվորական ծառայության: Իսկ այն անձը, ով ունի ՀՀ քաղաքացիություն և դրանից հետո է միայն ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն և անցել կամ անցնում է այլ պետությունում պարտադիր զինվորական ծառայության, ապա ՀՀ օրենսդիրն այդ հարցին բացարձակ չի անդրադարձել:

Հետևաբար, հիմք ընդունելով վերոշարադրյալը, դիմել ենք ՀՀ պաշտպանության նախարարին և ՀՀ անձնագրային և վիզաների վարչությանը՝ առաջարկելով հանդես գալ օրենսդրական առաջարկությամբ, մասնավորապես՝ մշակել «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 3.1-րդ հոդվածում (Երկքաղաքացիների զինապարտությունը) լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ և ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը, այնուհետև՝ ՀՀ օրենսդիր մարմնին: Այս օրենսդրական կարգավորումը թույլ կտա ինչպես քաղաքացի Ա. Մարտոյանին, այնպես էլ նրա նման նույն կարգավիճակում գտնվող մեր մյուս հայրենակիցներին, որոնք ժամանակին ձեռք են բերել այլ պետության քաղաքացիություն, սակայն պահպանել են ՀՀ քաղաքացիությունը, առանց խոչընդոտների կարողանան այցելել Հայաստան և/կամ վերադառնան հայրենիք, իսկ ՀՀ պետական լիազոր մարմինները միայն օրենքով սահմանված որոշումներ կկայացնեն նման իրավահարաբերությունից ծագող վեճեր լուծման ժամանակ:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից քննարկվել է Սախարովի կենտրոնի առաջարկությունը և հայտնվել է, որ բարձրացված խնդիրն իրոք ունի լուծման կարիք, քանի որ երկքաղաքացիների ՀՀ զինապարտությունը սահմանող «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 3.1-րդ հոդվածի գործող դրույթներն ամբողջությամբ չեն կարգավորվում երկքաղաքացիների զինապարտության առնչությամբ ծագող հնարավոր առանձնահատկությունները, մասնավորապես՝ մեկ պետությունում գորակոչի ենթակա

լինելու ժամանակ մեկ այլ պետությունում զինվորական ծառայություն անցնելու հանգամանքը: ՀՀ պաշտպանության նախարարի կողմից հանձնարարվել է իրավասու ստորաբաժանումներին (ՀՀ պաշտպանության նախարարության իրավաբանական վարչություն, ՀՀ զինվորական կոմիսարիատ) քննարկելու և առաջարկություններ ներկայացնելու խնդրահարույց հարաբերությունների կարգավորման հնարավոր տարբերակների վերաբերյալ, որոնք վերջնական արդյունքում կիրացվեն ՀՀ սահմանադրական փոփոխությունների շրջանակում պաշտպանության ոլորտի օրենսդրական ակտերի փոփոխությունների հետ միաժամանակ: Իսկ ՀՀ անձնագրային և վիզաների վարչությունից հայտնել են իրենց պատրաստակամությունը իրենց իրավասության սահմաններում մասնակցելու նշված նախագծի քննարկմանը և ներկայացնել առաջարկություններ՝ ըստ անհրաժեշտության:

ՀՀ քաղաքացի Աղվան Արզումանյանին տարկետման իրավունք տալու մասին ՀՀ կառավարության որոշման կայացման վերաբերյալ

Քաղաքացի Ա. Արզումանյանի դիմումի և նրա կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզել ենք, որ նա 2006թ. ընդունվել է ՌԴ Ազգերի բարեկամության համալսարան, որտեղ ուսանելու համար ՀՀ կառավարության 22.03.2007թ. հ. 320 որոշմամբ ստացել է տարկետում մինչև ուսումնառության ավարտը՝ 2011թ. աշնանային զորակոչը: Նույն ԲՈՒՀ-ի կլինիկական ինտերնատուրայում /պետպատվեր/ մանկահասակների ստոմատոլոգիայի մասնագիտությամբ ուսումնառությունը շարունակելու համար ՀՀ կառավարության 29.12.2011թ. հ. 1875-Ա որոշմամբ Ա. Արզումանյանին տրվել է տարկետում մինչև 2012թ. աշնանային զորակոչ: Իսկ կլինիկական օրդինատուրայում /մանկական ստոմատոլոգիայի /օրթոդոնտիա/ մասնագիտությամբ/ ուսումնառություն ստանալու համար նրան տրվել է տարկետում ՀՀ կառավարության 16.01.2013թ. հ. 30-Ա որոշմամբ, որի դիմաց գրավադրել է 8.500.000 ՀՀ դրամին համարժեք անշարժ գույք:

Ա. Արզումանյանն իր ուսումը շարունակում է նույն ԲՈՒՀ-ի “Հանրային առողջության, առողջապահության և հիգիենայի ամբիոնի բժշկապրոֆիլակտիկ գործ ուղղությամբ” ֆակուլտետում որպես առկա ուսուցման ասպիրանտ: Ուսուցման ժամկետը համարվում է 20.09.2014թ. մինչև 19.09.2017թ. ընկած ժամանակահատվածը: Մինչև տարկետման ժամկետի լրանալը (24.09.2014թ.) Ա. Արզումանյանը 2014թ. հուլիսին դիմել է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն)՝ տարկետման ժամկետը երկարաձգելու խնդրանքով: Նրա դիմումը քննարկվել է Նախարարությունում և 2014թ. ամառային զորակոչի ընթացքում Նախարարության կողմից սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել “Աղվան Արզումանյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին” ՀՀ կառավարության որոշման նախագիծը: ՀՀ կառավարության պետաիրավական կոմիտեի 06.11.2014թ. նիստի ժամանակ (16.3/219011) որոշման նախագծի քննարկումը մերժվել է և Նախարարությանը ներկայացվել է առաջարկ՝ ՀՀ կառավարության աշխատակազմ սահմանված կարգով

ներկայացնել ՀՀ կառավարության 29.08.2002թ. հ. 1394-Ն որոշման 4-րդ կետի կիրառման համար չափորոշիչներ սահմանելու վերաբերյալ որոշման նախագիծ: Նախարարության կողմից 04.02.2015թ. կարծիք է ներկայացվել ՀՀ կառավարության աշխատակազմ:

Ա. Արզումանյանի կողմից ներկայացված փաստաթղթերի ցանկում առկա են ՀՀ որոշ գերատեսչությունների գրավոր պատասխաններ, որոնցով նրանք հայտնել են Նախարարությանը, որ դիտողություններ չունեն “Աղվան Արզումանյանին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու մասին” ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ:

Նախարարությունը 16.02.2015թ. Ա. Արզումանյանին հայտնել է, որ իր վերաբերյալ որոշման նախագիծը 04.02.2015թ. կրկին ներկայացրել է ՀՀ կառավարության քննարկմանը, իսկ հետագա ընթացքի մասին լրացուցիչ կտեղեկացվի: Սակայն քաղաքացին մինչև Սախարովի կենտրոն դիմելը տեղեկացված չէր իր դիմումի քննարկման մասին: Արդյունքում, Վանաձորի զինկոմիսարիատը 13.02.2015թ. Ա. Արզումանյանի փաստաթղթերը ուղարկել էր ՀՀ ոստիկանություն՝ պատճառաբանելով, որ ձմեռային գորակոչն ավարտվել է, իսկ Ա. Արզումանյանին տարկետում տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որևէ պաշտոնական տեղեկատվություն գոյություն չունի, ուստի նրա նկատմամբ պետք է քրեական գործ հարուցել և իրականացնել քրեական հետապնդում՝ ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու հիմքով: ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 7-րդ կայազորային քննչական բաժնի կողմից Ա. Արզումանյանը 23.02.2015թ. տեղեկացվել է, որ իր կողմից ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու դեպքի առթիվ 23.02.2015թ. հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով և կատարվում է նախաքննություն: 23.04.2015թ. նույն վարչության կողմից կայացվել է որոշում Ա. Արզումանյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Միննույն ժամանակ Վանաձորի զինվորական կոմիսարիատը ծանուցագիր է ուղարկել Ա. Արզումանյանին, որ 2015թ. հուլիսի 9-ին ժամը 9.00-ին անձնագրով և կցագրման վկայականով ներկայանա գորակոչային տեղամաս: 2015թ. հունվարի 27-ին քաղաքացի Արզումանյանը Ռուսաստանից վերադարձել է Հայաստան և քանի որ տարկետման իրավունք չի ստացել, չի կարողանում կրկին մեկնել Ռուսաստան՝ իր ուսումը շարունակելու համար:

Մեր կարծիքով, ՀՀ կառավարության և Նախարարության անարդյունավետ և անհամաձայնեցված գործունեության արդյունքում Ա. Արզումանյանի իրավունքները խախտվել են և նա հայտնվել է մեղադրյալի կարգավիճակում: Համապատասխան առաջարկությամբ դիմել ենք ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին, այնուհետև ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 7-րդ կայազորային քննչական բաժնի: Մեր կազմակերպության միջամտության արդյունքում ՀՀ կառավարության կողմից 16.07.2015թ. ընդունվեց հ. 767-Ա որոշումը, համաձայն որի Ա. Արզումանյանը պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստացավ և մեկնեց Ռուսաստան՝ իր ուսումը շարունակելու: ՀՀ

կառավարության այդ որոշման հիման վրա Ա. Արզումանյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվեց և հարուցված քրեական գործը կարճվեց՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

**Փաստաբաններ և ՀՀ փաստաբանների պալատի անդամներ Տիգրան
Հայրապետյանի և Նիկոլայ Բաղդասարյանի նկատմամբ ապօրինի հարուցված քրեական
հետապնդումները դադարեցնելու գործերի վերաբերյալ**

Վերջին տարիներին Հայաստանում իրավապաշտպանների, փաստաբանների, քաղաքացիական նախաձեռնությունների անդամներն անհիմն քրեորեն հետապնդվում են իրավապահ մարմինների կողմից, փորձ է արվում հոգեբանական ճնշումների միջոցով նրանց ահաբեկել և լռեցնել: Դրա վառ օրինակներից մկեր փաստաբան Տ. Հայրապետյանի գործն է:

Փաստաբան Տ. Հայրապետյանն արդյունավետորեն աշխատել և համագործակցում է մի շարք հասարակական կազմակերպությունների հետ, այդ թվում նաև Սախարովի կենտրոնի: Իր պաշտպանյալ Ջ. Ամարիկյանին հոգեբուժարանում ապօրինի պահելու, արժանապատվությունը նվաստացնելու և բռնության ենթարկելու փաստի վերաբերյալ փաստաբան Տ. Հայրապետյանը բողոքել է և դրա քննության ընթացքում վերջինիս գործողությունները քննիչի կողմից որակվել է որպես գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության միջամտություն և «սադրիչ հարցեր տալու և չափից ավելի միջնորդություններ ներկայացնելու» հիմքով փաստաբանի նկատմամբ քրեական հետապնդում է սկսվել:

Մեր կարծիքով քննիչի այս քայլը հանդիսանում է իրավապաշտպան գործունեության և շահերի պաշտպանության նկատմամբ պետական ոտնձգություն: Դիմելով ՀՀ գլխավոր դատախազին հայտնել ենք մեր մտահոգությունը ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից փաստաբան Տ. Հայրապետյանի նկատմամբ հարուցված քրեական գործի կապակցությամբ, որը ոչ այլ ինչ է, քան ուղղակի միջամտություն փաստաբանի մասնագիտական պարտականությունների կատարման նկատմամբ՝ վարույթն իրականացնող մարմնում հայտնած իր կարծիքի կամ դիրքորոշման համար: Ինչպես նաև պահանջել, որպեսզի ՀՀ գլխավոր դատախազությունը և ՀՀ հատուկ քննչական ծառայությունը անհապաղ դադարեցնեն քրեական հետապնդումը փաստաբան Տ. Հայրապետյանի նկատմամբ, իսկ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Խ. Մեջլումյանի նկատմամբ իրականացնել ծառայողական քննություն և նրան ենթարկել պատասխանատվության՝ պաշտոնական դիրքը չարաշահելու համար:

“Փաստաբանության մասին” ՀՀ օրենքով փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով: Փաստաբանը փաստաբանական գործունեություն իրականացնելիս

ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլ անձանց իրավունքները և ազատությունները:

Ավելին, ՀՀ օրենսդրությունը չի սահմանափակում փաստաբանի կողմից միջնորդություններ ներկայացնելու քանակը, ինչ վերաբերում է այդ միջնորդություններին որակին, ապա այն քննարկման առարկա դարձնելուց հետո նոր կարելի է իրավական գնահատական տալ այն էլ օրենքով սահմանված կարգով և ժամկետում: Փաստորեն սույն դեպքում “գենքերի հավասարության” սկզբունքի խախտում է տեղի է ունեցել, քննիչը չարաշահելով իր լիազորությունները, ինքն իրեն իրավունք է վերապահել գործով ներգրավված փաստաբանի նկատմամբ քրեական գործ հարուցել՝ փորձելով դրա միջոցով հոգեբանական ճնշում գործադրել փաստաբանի նկատմամբ և խուսափել նրա պաշտպանյալ Ջ. Ամարիկյանին հոգեբուժարանում ապօրիի պահելու, նրա արժանապատվությունը նվաստացնելու և խոշտանգման դեպքի առնչությամբ հարուցված քրեական գործը բացահայտելուց:

Սախարովի կենտրոնը միացել է նաև մի խումբ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների կողմից արված հայտարարությանը: Արդյունքում, ՀՀ քննչական կոմիտեն կարճել է փաստաբան Տ. Հայրապետյանի նկատմամբ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից հարուցված քրեական գործը և դադարեցրել նրա նկատմամբ քրեական հետապնդումը, սակայն այդ որոշումը կայացնող քննիչը չի ենթարկվել քրեական պատասխանատվության:

Խստորեն մտահոգված և խորապես անհանգստացած ենք նաև մեկ այլ փաստաբան, ՀՀ փաստաբանների պալատի անդամ Նիկոլայ Բաղդասարյանի նկատմամբ ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության կողմից հարուցված քրեական հետապնդման առնչությամբ: Փաստաբան Ն. Բաղդասարյանի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում այն բանի համար, որ նա, հանդիսանալով ամբաստանյալ Գ. Գեղամյանի պաշտպան, հավաքել է վկա Տ. Հ. վերաբերյալ տեղեկատվություն, որոնք պարունակել են անձնական գաղտնիք, իսկ այնուհետև այդ տեղեկատվությունը հրապարակել է լրատվական միջոցներում, ինչը նախաքննական մարմինը դիտել է որպես անձնական գաղտնիքի տարածում:

Իրավապաշտպան հասարակական կազմակերպություններս արձանագրել ենք, որ ՀՀ օրենսդրության համաձայն փաստաբանին իրավունք է վերապահված օրենքով չարգելված եղանակով անհրաժեշտության դեպքում հավաքագրել ապացույցներ, այդ թվում նաև այնպիսի ապացույցներ, որոնք պարունակում են անձնական գաղտնիք: Բացի այդ, փաստաբանը, որը հանդիսանում է քրեական գործով դատավարության մասնակից, իրավունք ունի հրապարակել քրեական գործին կցված ցանկացած ապացույց, եթե դատարանը վերջինիս չի նախազգուշացրել այդ փաստաթուղթը չհրապարակելու մասին և փաստաբանից չի վերցրել գրավոր ստորագրություն: Այդպիսի դեպքերում դատարանը պարտավոր է դատական նիստն անցկացնել դռնփակ ռեժիմով, որի ժամանակ փաստաբանն իրավունք ունի հրապարակել գործին կցված ցանկացած փաստաթուղթ:

Փաստաբան Ն. Բաղդասարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելն այն հիմքով, որ նա հավաքագրել է ապացույցներ, անձնական գաղտնիք պարունակող դատաբանի կողմից նախազգուշացված, հրապարակել է այդ ապացույցները, հանդիսանում է փաստաբանական գործունեության անկախության երաշխիքների նկատմամբ ոտնձգություն:

ՀՀ իրավապահ մարմինների նման վարքագիծը վերստին հաստատում է, որ Հայաստանի Հանրապետությունում պետության կողմից ապօրինի գործողությունների միջոցով մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված գործունեությունը կոպտորեն խոչընդոտելը, նման գործունեություն իրականացնող անձի նկատմամբ ապօրինի, առանց որևէ իրավական հիմքի քրեական հետապնդման միջոցով ճնշում գործադրելը դարձել է արատավոր երևույթ: Նման գործելակերպը հանդիսանում է ՀՀ իրավապահ մարմինների կողմից ինչպես ՀՀ սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարումից հրաժարում, այնպես էլ փաստաբանության ինստիտուտի անկախության դեմ ուղղված գործընթաց: Հայտարարությամբ հորդորել ենք ՀՀ իշխանություններին, մասնավորապես՝ ՀՀ գլխավոր դատախազությանը, վերադառնալ օրինականության դաշտ և պահպանել իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքը՝ ապահովելով իրավապաշտպանների համար ներպետական օրենսդրությամբ և միջազգայնորեն հաստատված պարտավորությունների կատարումը և պահանջում ենք անհապաղ դադարեցնել փաստաբան Ն. Բաղդասարյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը:

* Սախարովի կենտրոնի գործունեությանը կարող եք հետևել մեր համացանցային կայքի <http://sakharovcenter.org/> և ֆեյսբուքյան էջի <https://web.facebook.com/SakharovCentre/?fref=ts> միջոցով: